

աշակերտ Թադիկ¹ անուն, զայր զգաստ եւ բարեպաշտան², հանդերձ եղբարքք, երանութեանն հասելոյ³ սպասաւոր սրբոյն ի փառս Աստուծոյ⁴ կարգէին:

[ԻԸ]

7 Եւ գլխաւորս, վերակացուս, տեղապահս յայտ արարեալ հարցն կատարելոց⁵, որոց առաջինն⁶ Յովսէփ, գլխաւոր ժողովոյն, եւ երկրորդն այլ աշակերտ՝ Յովհան⁷ անուն, այր իսկ սուրբ, վարդապետասէր եւ ճշմարտապատում: 2 Որում դէպ լինէր յետ վախճանի սրբոյն, բազում եւ ազգի ազգի փորձութեանց եւ կապանաւոր վշտաց, մենամարտիկ երկպատական բռնութեանն, ի Տիգրոն⁸ քաղաքի վասն Զրիստոսի յաղթութեամբ տարեալ համբերեաց. վասն որոյ եւ զխոստովանողական անուն ժառանգեաց, ի նոյն վերակացութիւնն դառնայր յերկիրն Յայոց:

3 Իսկ բարեացապարտին⁹ Վահանայ, որ յանկարծահաս կենաց ամենեցուն լինէր¹⁰, աշխարհաճնունդ¹¹ հայրենեացն սեպիական որդի¹² գտեալ շնորհաւքն Զրիստոսի Աստուծոյ մերոյ¹³, մերձաւոր կենակից լինել¹⁴ վայելէր:

[ԻԹ]

7 Եւ զի ըստ աւրիկականի գրելոցս առ ի մենջ հարքն ի կատարումն¹⁵ դարձան՝ ոչ եթէ ի հին համբաւուց տեղեկացեալ եւ մատենագրեալ զայս կարգեցաք, այլ որոց մեր իսկ ականատես¹⁶ եղեալ կերպարանացն, եւ առնութեա-

1 *Ճա Ճք* զԹադիկ

2 *Ճա Ճք* եւ զբարեպաշտոն

3 *b* հասելոյ / *միւսն*. հասելոց

4 *c* սրբոյն / *abdeվ* սրբոց / *Ճա Ճք* հասանելով՝ սպասաւորել սրբոյն. ի փառս Աստուծոյ զի նմայ իսկ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ: *Վերջանում են Ճա Ճք ձեռագրերը:*

5 վ ըստ յառաջագոյն կատարելոյ վարդապետին

6 *bc* կատարելոց ըստ յառաջագոյն որոց

7 *bc* Յովհան / *de* Յոհան

8 *b* Տիգրոն

9 *d* բարեացապարտիք

10 *բոլորը*՝ յանկարծահաս կենաց ամենեցուն լինէր, որ. *ուղղ.* որ յանկարծահաս կենաց ամենեցուն լինէր

11 *բոլորը*՝ աշխարհաճնին / Ս աշխարհաճնունդ

12 *բոլորը*՝ ոգի / Ս որդի

13 *de չիք* մերոյ

14 Ս մերձաւոր կենացն յաւիտենից լինէր

15 *dվ* կատարումն / *միւսն*. կափարում *ուղղ.* կատարումն

16 *bc* ականատեսք